Ուսումնական մոդուլ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար. Ընտրությունների անվտանգությունը

Ազատ, արդար և վստահելի ընտրությունների անցկացումն ապահովելու համար կարևոր է ստեղծել անվտանգ ընտրական միջավայր, որպեսզի կանխվեն այն գործոնները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ընտրողների ակտիվության, ընտրությունների արդյունքների լեգիտիմության և հասարակության կողմից այս արդյունքների վստահության նկատմամբ:

Անվտանգ և խաղաղ ընտրական միջավայրը ենթադրում է այնպիսի պայմանների ապահովում, որոնք ստեղծում են ընտրողի սահմանադրական իրավունքի իրացման հնարավորություն, առանց բռնության ու ճնշման, և երաշխիք ընտրություններին մասնակցող կողմերի գործունեության լիարժեք իրականացման համար: Վերոնշյալ պայմանների ապահովումը ընտրություններին մասնակցող բոլոր կողմերի պատասխանատվությունն է:

Ընտրությունների անվտանգության ապահովումը պահանջում է լավ պլանավորում, որն առաջին փուլում ներառում է ռիսկերի բացահայտում և գնահատում, այնուհետև՝ կանխարգելիչ և իրավախախտումներին արձագանքման միջոցառումների ճիշտ սահմանում:

Ընտրությունների անվտանգության պլանի իրականացումն իր հերթին կապվում է ընտրական վարչության և իրավապահ մարմինների միջև արդյունավետ հաղորդակցության անհրաժեշտության հետ:

Ներկայացված ուսումնական մոդուլը ներառում է ցուցումներ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար.

- ☑ մինչև քվեարկության օրն ընկած ժամանակահատվածում ընտրությունների անվտանգության ապահովման նպատակով անցկացվելիք միջոցառումների մասին,
- ☑ քվեարկության օրը ընտրությունների անվտանգության նպատակով անցկացվելիք միջոցառումների մասին:

Մինչև քվեարկության օրն ընկած ժամանակահատվածում ընտրությունների անվտանգության ապահովման նպատակով անցկացվելիք միջոցառումներ

Քվեարկության նախապատրաստման և անցկացման նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ստանում է ընտրական պարագաներ և փաստաթղթեր: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահն անձամբ է պատասխանատու քվեաթերթիկների, հատուկ ծրարների, հանձնաժողովի կնիքների, ամփոփիչ արձանագրությունների և այլ ընտրական փաստաթղթերի պահման և ըստ նշանակման տրամադրման համար:

1. Այն դեպքում, երբ **ընտրական պարագաների, փաստաթղթերի փոխադրման ժամանակ** ստեղծվում է դրանց ժամանակին տեղ հասցնելը խափանելու, վնասելու կամ ոչնչացնելու վտանգ, գործեք ըստ ստորև տրված ցուցումների.

1.1. Եթե ընտրական պարագաների, փաստաթղթերի ընտրական տեղամաս հասցնելուն խանգարում է քաղաքացիների կողմից այնտեղ տանող ճանապարհի փակելը.

- փորձեք քաղաքացիներին բացատրել իրավիճակը,
- չթողնեք ընտրական պարագաները և փաստաթղթերն առանց հսկման,
- քաղաքացիների կողմից ձեր խնդրանքն անտեսելու դեպքում անհապաղ տեղեկացրեք իրավապահ մարմիններին,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- գործեք ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և իրավապահ մարմինների կողմից տրված հրահանգի:

1.2. Եթե ընտրական պարագաների, փաստաթղթերի տեղամասային ընտրական հանձնաժողով հասցնելուն խանգարում է քաղաքացիների կողմից այնտեղ տանող ճանապարհի փակելը՝ բացահայտորեն արտահայտված հակաօրինական նպատակով, որպեսզի տեղի ունենա ընտրական պարագաների, փաստաթղթերի հափշտակում, վնասում կամ ոչնչացում.

- անհապաղ տեղեկացրեք իրավապահ մարմիններին,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին
- գործեք ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և իրավապահ մարմինների կողմից տրված հրահանգի,
- չթողնեք ընտրական պարագաները և փաստաթղթերն առանց հսկման,
- հնարավորության սահմաններում արձանագրեք փաստը տեսանկարահանումով (օգտագործեք հեռախոս կամ տեսախցիկ):

1.3. Եթե ընտրական պարագաների, փաստաթղթերի տեղամասային ընտրական հանձնաժողով հասցնելուն խանգարում է ճանապարհատրանսպորտային պատահարը.

- անհապաղ տեղեկացրեք իրավապահ մարմիններին,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- գործեք ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և իրավապահ մարմինների կողմից տրված հրահանգի,
- ապահովեք ընտրական պարագաների, փաստաթղթերի պաշտպանություն և չթողնեք առանց հսկման,
- հնարավորությունների սահմաններում, նույնականացրեք ականատեսներին,
- հնարավորությունների սահմաններում, նույնականացրեք վարորդին,
- հնարավորությունների սահմաններում, արձանագրեք փաստը տեսանկարահանումով (օգտագործեք հեռախոս կամ տեսախցիկ):

2. Այն դեպքում, եթե **ընտրական պարագաները, փաստաթղթերը պահելիս** ստեղծվում է դրանց վնասման կամ ոչնչացման վտանգ, գործեք ըստ ստորև տրված ցուցումների.

2.1. Եթե շենքը չի տալիս ընտրական փաստաթղթերն անվտանգ պահելու երաշխիք, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հետ համաձայնեցմամբ, պահանջեք շինության պահպանություն և նշվածի մասին տեղեկացրեք իրավապահ մարմիններին:

2.2. Եթե շենքի հարող տարածքում կամ անմիջապես շենքում հրդեհ է առաջացել.

- անհապաղ տեղեկացրեք իրավապահ մարմիններին և Արտակարգ իրավիճակների կառավարման գործակալությանը,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- գործեք ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի, իրավապահ մարմինների և Արտակարգ իրավիճակների կառավարման գործակալության կողմից տրված հրահանգների,
- հնարավորությունների սահմաններում, ընտրական պարագաները և փաստաթղթերը տեղափոխեք անվտանգ վայր:

2.3. Եթե շենքը վնասվել է աղետից կամ առաջացել է դրա վնասման իրական վտանգ (ջրհեղեղ, ուժեղ անձրև, քամի).

- անհապաղ տեղեկացրեք Արտակարգ իրավիճակների կառավարման գործակալությանը,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- հնարավորության սահմաններում փորձեք ընտրական պարագաները և փաստաթղթերը տեղափոխել անվտանգ վայր:

Քվեարկության օրը ընտրությունների անվտանգության ապահովման նպատակով անցկացվելիք միջոցառումներ

Քվեարկության օրը քվեարկության շենքում կարգուկանոնի պահպանումը ղեկավարում է և դրա համար պատասխանատու է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից քվեարկության շենքում կարգուկանոնի պահպանման համար ընդունված որոշումների կատարումը պարտադիր է հանձնաժողովի անդամների, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց և ընտրողների համար:

Հանձնաժողովի աշխատանքին խանգարելու և կարգուկանոնը խախտելու դեպքում, խախտողին տեղամասային ընտրական հանձնաժողովի տեղակայման շենքից վտարելու հարցի վերաբերյալ որոշումը ընդունում է տեղամասային ընտրական հանձնաժողովը, ինչի վերաբերյալ կազմվում է համապատասխան ակտ, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և անդամները: Ակտի մեջ նշվում է խախտողի անունը և ազգանունը, ընտրատարածքի և ընտրատեղամասի համարները, խախտման էությունը և այն կատարելու ճշգրիտ ժամանակը:

1. Այն դեպքում, եթե **քվեարկության շենքում** վտանգ է ստեղծվում քվեարկության գործընթացի ընթացքին կամ/և ընտրողների ազատ կամարտահայտման ապահովմանը, գործեք ըստ ստորև տրված ցուցումների.

1.1. Եթե քաղաքացին կամ քաղաքացիների խումբը, չնայած հանձնաժողովի նախագահի ցուցումներին, **փորձում է ապօրինի, ուժի գործադրմամբ ներխուժել քվեարկության շենք.**

- անհապաղ տեղեկացրեք իրավապահ մարմիններին,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- գործեք ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և իրավապահ մարմինների կողմից տրված հրահանգի,
- հնարավորությունների սահմաններում, արձանագրեք փաստը տեսանկարահանումով (օգտագործեք հեռախոս կամ տեսախցիկ);

- անհրաժեշտության դեպքում փակեք քվեարկության սենյակի մուտքի դուռը,
- խախտումը խափանելուն պես, ընտրական հանձնաժողովի նախագահի համաձայնության դեպքում ոստիկանության աշխատակիցները լքում են քվեարկության շենքը:

Նկատի՛ ունեցեք

Քվեարկության օրը արգելվում է փակել քվեարկության շենքը, ընդհատել կամ դադարեցնել քվեարկությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է ապահովել ընտրությունների համընդհանուրությունը, հավասարությունը և ընտրողների ազատ կամարտահայտումը:

Քվեարկության շենքը ժամանակավոր փակելու, քվեարկությունն ընդհատելու կամ դադարեցնելու մասին որոշումը միանձնյա ընդունում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, որը ստանձնում է ողջ պատասխանատվությունը այս որոշման ընդունման համար:

Քվեարկության շենքը ժամանակավոր փակելու դեպքում, քվեարկությունն ընդհատելուն կամ դադարեցնելուն պես տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է ընդունել որոշում՝ հանձնաժողովի նախագահի համապատասխան որոշումը հաստատելու կամ չեղարկելու մասին:

Քվեարկության շենքը բացելու և քվեարկությունը շարունակելու մասին որոշումը միանձնյա ընդունում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:

Քվեարկության ընդհատման մասին հանձնաժողովի նախագահի որոշումը հաստատելու կամ չեղարկելու մասին հանձնաժողովի որոշումը գրանցվում է գրանցամատյանում, քվեարկության ընդհատման պատճառի և ժամանակի նշմամբ, ինչը հաստատվում է հանձնաժողովի անդամների ստորագրություններով:

Քվեարկության դադարեցման մասին հանձնաժողովի նախագահի որոշումը հաստատելու կամ չեղարկելու մասին հանձնաժողովի որոշումն ընդունվում է կարգադրությամբ, որում նշվում է քվեարկության դադարեցման պատճառը և ժամանակը:

Քվեարկության ընդհատման պատճառի վերացման պես հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ քվեարկությունը վերսկսվում է: Եթե քվեարկությունը դադարեցված է հայտարարվել, այն այլևս չի վերսկսվում:

1.2. Եթե քաղաքացու/քաղաքացիների խմբի կամ քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձի կողմից հանձնաժողովի անդամների հետ **փոխադարձ վեճի պատճառով խախտվում է քվեարկության գործընթացի ընթացքը,** գործեք ըստ ստորև տրված ցուցումների.

- կարգուկանոնը խախտող անձանց կոչ արեք քվեարկության շենքում պահպանել կարգուկանոն և բացատրեք, որ հակառակ դեպքում կվտարվեն քվեարկության շենքից,

- պահանջի անտեսման դեպքում, հանձնաժողովը պետք է որոշում կայացնի քվեարկության շենքից խախտողի վտարման մասին, ինչի վերաբերյալ կազմվում է համապատասխան ակտ,
- եթե խախտողը չի ենթարկվում հանձնաժողովի որոշմանը վտարման մասին, անհապաղ տեղեկացրեք իրավապահ մարմիններին,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- գործեք ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և իրավապահ մարմինների կողմից տրված հրահանգի,
- հնարավորությունների սահմաններում, արձանագրեք փաստը տեսանկարահանումով (օգտագործեք հեռախոս կամ տեսախցիկ),
- ապահովեք ընտրական փաստաթղթերի (քվեաթերթիկների) և քվեատուփի պահպանություն,
- անհրաժեշտության դեպքում փակեք քվեարկության շենքի մուտքի դուռը,
- խախտումը վերացնելուն պես, ընտրական հանձնաժողովի նախագահի համաձայնության դեպքում ոստիկանության աշխատակիցները լքում են քվեարկության շենքը:

1.3. Եթե քաղաքացին/քաղաքացիների խումբը կամ քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձը փորձել է **ընտրական քվեաթերթիկները/փաստաթղթերը ապօրինի դուրս տանել քվեարկության շենքից, քվեատուփի մեջ քվեաթերթիկներ լցնել, քվեատուփի կնիքի ամբողջականությունը խախտել, ընտրական փաստաթղթերը կամ քվեատուփը վնասել,** գործեք ըստ ստորև տրված ցուցումների.

- կանգնեցրեք իրավախախտին,
- անհապաղ տեղեկացրեք իրավապահ մարմիններին,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- գործեք ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և իրավապահ մարմինների կողմից տրված հրահանգի,
- անհրաժեշտության դեպքում փակեք քվեարկության սենյակի մուտքի դուռը,
- հնարավորությունների սահմաններում, արձանագրեք փաստը տեսանկարահանումով (օգտագործեք հեռախոս կամ տեսախցիկ),
- խախտումը խափանելուն պես, ընտրական հանձնաժողովի նախագահի համաձայնության դեպքում ոստիկանության աշխատակիցները լքում են քվեարկության շենքը:

1.4. Եթե քաղաքացին/քաղաքացիների խումբը կամ քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձը քվեարկության **շենքում լուսանկարահանում, տեսանկարահանում է իրականացնում գաղտնիության սկզբունքի խախտմամբ, քարոզչություն է վարում, ճնշում է գործադրում ընտրողի ազատ կամարտահայտման վրա կամ/և ֆիզիկապես խոչընդոտում է ընտրողի տեղաշարժը**, գործեք ըստ ստորև տրված ցուցումների.

- կանգնեցրեք իրավախախտին,
- անհապաղ տեղեկացրեք իրավապահ մարմիններին,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- գործեք ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և իրավապահ մարմինների կողմից տրված հրահանգի,
- անհրաժեշտության դեպքում փակեք քվեարկության սենյակի մուտքի դուռը,
- հնարավորությունների սահմաններում, արձանագրեք փաստը տեսանկարահանումով (օգտագործեք հեռախոս կամ տեսախցիկ),
- խախտումը խափանելուն պես, ընտրական հանձնաժողովի նախագահի համաձայնության դեպքում ոստիկանության աշխատակիցները լքում են քվեարկության շենքը:

1.5. Եթե քաղաքացին/քաղաքացիների խումբը կամ քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձը փորձել է **խանգարել հանձնաժողովի գործունեությանը կամ միջամտել նրա գործունեությանը, ինչն առաջացրել է քվեարկության գործընթացի խոչընդոտման, խափանման կամ արդյունքների վրա ներգործելու վտանգ,** գործեք ըստ ստորև տրված ցուցումների.

- կարգուկանոնը խախտող անձանց կոչ արեք պահպանել կարգուկանոնը քվեարկության շենքում և բացատրեք, որ հակառակ դեպքում կվտարվեն քվեարկության շենքից,
- պահանջի անտեսման դեպքում, հանձնաժողովը պետք է որոշում կայացնի քվեարկության շենքից խախտողի վտարման մասին, ինչի վերաբերյալ կազմվում է համապատասխան ակտ,
- եթե խախտողը չի ենթարկվում հանձնաժողովի որոշմանը վտարման մասին, անհապաղ տեղեկացրեք իրավապահ մարմիններին՝ հանձնաժողովի կողմից ընդունված որոշումն ի կատար ածելու նպատակով,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- հնարավորությունների սահմաններում, արձանագրեք փաստը տեսանկարահանումով (օգտագործեք հեռախոս կամ տեսախցիկ),
- ապահովեք ընտրական փաստաթղթերի (քվեաթերթիկների) և քվեատուփի պահպանում,
- անհրաժեշտության դեպքում փակեք քվեարկության սենյակի մուտքի դուռը,
- խախտումը խափանելուն պես, ընտրական հանձնաժողովի նախագահի համաձայնության դեպքում ոստիկանության աշխատակիցները լքում են քվեարկության շենքը:

Նկատի՛ ունեցեք

Քվեարկության գործընթացի անվտանգության պահպանման նպատակով քվեարկության շենք կանչված իրավապահ մարմինների ներկայացուցիչները հետաքննության նպատակների համար, «Վրաստանի ընտրական օրենսգիրք» օրգանական օրենքի 8-րդ հոդվածի 25-րդ կետի համաձայն, բացառությամբ քվեախցիկի, և առանց ընտրական գործընթացին խանգարելու, իրավունք ունեն լուսանկարահանում, տեսանկարահանում իրականացնել իրենց ձեռքի տակ եղած ցանկացած ձայնագրող սարքով (շարժական տեսախցիկ, բջջային հեռախոս, պլանշետ):

1.6. Եթե քվեարկության օրվա ընթացքում **քվեարկության սենյակում անջատվել է էլեկտրաէներգիան.**

- տեղեկատվությունն անհապաղ տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- տեղեկացրեք իրավապահ մարմիններին,
- գործեք ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և իրավապահ մարմինների կողմից տրված հրահանգի,
- ապահովեք ընտրական փաստաթղթերի (քվեաթերթիկների) և քվեատուփի պահպանությունը,
- անհրաժեշտության դեպքում փակեք քվեարկության սենյակի մուտքի դուռը:

2. **Քվեարկության շենքի հարող տարածքում** հասարակական կարգի խախտման կամ խախտման վտանգի առկայության դեպքում, գործեք ըստ ստորև տրված ցուցումների.

2.1. Այն դեպքում, եթե քվեարկության շենքի հարող տարածքում քաղաքացու/ քաղաքացիների խմբի առկայությունը, ելնելով նրա գործողությունից, կարող է հարուցել ընտրական գործընթացի արգելափակում կամ/և ֆիզիկապես խոչընդոտի ընտրողի տեղաշարժը, գործեք ստորև տրված ցուցումներին համապատասխան.

- անհապաղ տեղեկացրեք իրավապահ մարմիններին,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- գործեք ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և իրավապահ մարմինների կողմից տրված հրահանգի:

2.2. Այն դեպքում, եթե գոյություն ունի ընտրությունների անվտանգության խախտման մասին տեղեկատվություն կամ/և կասկածելի փաստացի հանգամանք (այդ թվում, զանգվածային հավաք, կամ զանգվածային տեղափոխություն առանց բախման), որը մեծ հավանականությամբ չի խոսում անմիջական/ ակնթարթային վտանգի մասին, սակայն միևնույն ժամանակ չի բացառում ընտրությունների անվտանգության խախտման ռիսկը, գործեք ըստ ստորև տրված ցուցումների.

- անհապաղ տեղեկացրեք իրավապահ մարմիններին,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- գործեք ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և իրավապահ մարմինների կողմից տրված հրահանգի:

Նկատի՛ ունեցեք

Խախտումը խափանելուն պես և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի համաձայնության դեպքում ոստիկանության աշխատակիցները լքում են քվեարկության շենքի հարող տարածքը:

Բացառիկ դեպքում, քվեարկության շենքի հարող տարածքում, բայց ոչ կոնկրետ քվեարկության շենքում, ոստիկանության աշխատակիցները կարող են գտնվել նաև առանց տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջի և համաձայնության, եթե դա բացառապես անհրաժեշտ է հասարակական կարգի խախտումը խափանելու կամ հասարակական կարգը պահպանելու համար: Նման անհրաժեշտության վերացման պես, ոստիկանության աշխատակիցները պետք է լքեն քվեարկության շենքի հարող տարածքը:

3. Այն դեպքում, եթե ընտրատարածքային **ընտրական հանձնաժողովին ընտրական պարագաները/փաստաթղթերը փոխանցելու նպատակով փոխադրման ժամանակ** ստեղծվում է դրանց ժամանակին տեղ հասցնելը խափանելու, վնասելու կամ ոչնչացնելու վտանգ, գործեք ըստ ստորև տրված ցուցումների:

3.1. Եթե ընտրական պարագաները, փաստաթղթերը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով հասցնելուն խանգարում է քաղաքացիների կողմից այնտեղ տանող ճանապարհը փակելը.

- փորձեք քաղաքացիներին բացատրել իրավիճակը,
- չթողնեք ընտրական պարագաները/փաստաթղթերն առանց հսկման,
- քաղաքացիների կողմից ձեր պահանջի անտեսման դեպքում, անհապաղ տեղեկացրեք իրավապահ մարմիններին,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- գործեք ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և իրավապահ մարմինների կողմից տրված հրահանգի:

3.2. Եթե ընտրական պարագաները, փաստաթղթերը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով հասցնելուն խանգարում է քաղաքացիների կողմից այնտեղ տանող ճանապարհը փակելը բացահայտորեն արտահայտված հակաօրինական նպատակով, որպեսզի տեղի ունենա ընտրական պարագաների, փաստաթղթերի հափշտակում, վնասում կամ ոչնչացում.

- անհապաղ տեղեկացրեք իրավապահ մարմիններին,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- գործեք ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և իրավապահ մարմինների կողմից տրված հրահանգի,
- չթողնեք ընտրական պարագաները, փաստաթղթերը առանց հսկման,
- հնարավորությունների սահմաններում, արձանագրեք փաստը տեսանկարահանումով (օգտագործեք հեռախոս կամ տեսախցիկ).

3.3. Եթե ընտրական պարագաները, փաստաթղթերը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով հասցնելուն խանգարում է ավտոճանապարհային միջադեպը.

- անհապաղ տեղեկացրեք իրավապահ մարմիններին,
- տեղեկատվություն տրամադրեք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- գործեք ըստ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի և իրավապահ մարմինների կողմից տրված հրահանգի,
- ապահովեք ընտրական պարագաների, փաստաթղթերի պահպանում և չթողնեք դրանք առանց հսկման,
- հնարավորությունների սահմաններում, նույնականացրեք ականատեսներին,
- հնարավորությունների սահմաններում, նույնականացրեք վարորդին,
- հնարավորությունների սահմաններում, արձանագրեք փաստը տեսանկարահանումով (օգտագործեք հեռախոս կամ տեսախցիկ):

Ընտրությունների անվտանգության պահպանման անհրաժեշտության հետ կապված տեղեկատվությունը տեղամասային ընտրական հանձնաժողովը իրավապահ մարմիններին պետք է տրամադրի՝ «112»-ին հաղորդագրություն փոխանցելով կամ ուղղակի տեղեկացման ճանապարհով: